

* *

ապագայում, կարողանանք նրանց էլ յայտ-
նագործել:

Բացի Բարթոն Օղլուց, կան և ուրիշ-
ները, որոնց երգերը դեռ կարօտ են ու-
սումնասիրութեան: Այդպիսիներից կարելի
է յիշատակել Բաղէր Օղլի, Ղու Յովհանն-
նէս, Ղու Էգազ, Ղու Արզունի, Ամիր
Օղլի, Արդին Օղլի, և այլն:

Առ հասարակ սրանց երգերը արժանի են
առանձին ուշադրութեան, և զուցէ մօտիկ

Բ Ա Ռ Ե Ր

Յերիս — տեսակ, — Ֆերաթ — մարդ, — Զառ-
սակեթիւ, — Խտուր — միասին, — Զում — ինչու, — Նազ-
մաթ — ընթերց, — Մախշուշ — խառնաշփոթ, — Զա-
հաթ — պատեալ, — Շամս — արեւ, — Փեալամ —
խօսք, — Գառուտ — խոցոտ,
Նոր-ձուգա

ԱՐ. ԵՐԵՄԵԱՆՑ

ԲԱ՛Մ... ՓՈՐՈՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ

ՅԱՐԸՆԶԱԲԱՐ

Միևեոյն եղանակով, — Զօն հայ քաշերուն

ԱԶԱՏ-ՄԱՍԵԱՏ ալբէն ծալքէն՝ բիւր բոժբիւններ կը փողեն,
Մեր քաջերուն կարն ու կորովն առատագեղ կ'ողողեն.

Հոգիներն Հայոց կ'եփին ընդհանուր.

Է՛ հայրենիքի հրաւէրն՝ հեշտալուր.

Դուք որ կը սիրէք պըսակն երկընքի՝

Ու փառքը երկրիս որ վեր կը տանի,

Ո՛վ դուք սերունդ վեհ Հայերու,

Ճեպենք մեր վրէժը հանելու.

Մէն Հայ զէնքի թող փութայ,

Թող Հայ շիրիմն իսկ թընդայ.

Ուսերամերկ սուրանք յառա՛յ,

Վրէժ լուծելու, ո՛վ Հայեր քաջ,

Երթանք յառա՛յ,

Վէս՝ քաջալանջ,

Դիմենք յառա՛յ,

Ետա՛յ յառա՛յ,

Վազենք յառա՛յ:

ՀԱՅ գունդերու զաւարափողն որոտընդոտ կը զոչէ.

Խըժըրժալուր ազգաց շեփորն՝ անը կըռուին կը կոռչէ.

Հրեշտակներն ուրախ կը ցընծան պարեն.

Դուք որ կ'ողբան զըժոխքի խորէն.

Վրէժիւնդըութեան շեղ շանթն երբ ճայթի,

Պիտ՝ սարսեն այսերն, ո՛հ, սե խօլ մութի.

Ո՛վ դուք սերունդ, — և այլն, տես վերև:

ԵՌԱԿՈՒՆԵԱՆ զրօշակը պերճ կը ծածանի գեղափայլ՝

Նա՛ որ մընաց թըշնամիէն միշտ անասան անայլայլ.

Զօրապետն հեծած նրժոյգ մը բոցէ՛

Զոհուած քաջերուն վրէժը կը լուծէ.

Վրընջող բոցաշունչ իւր ձիուն վըրայ՝

Խիզախ գոչումով կըռուի կը սուրայ:

Ո՛վ դուք սերունդ, — և այլն

ԵՐԲ վերցընես, Արամ, քու զուխդ ու վեհապանձ գաս կանգնիս,

Պիտի գոռան՝ մոընչեն՝ հոընչեն՝ կորդիք, Երասին ու Մասիս.

Վըսեմ գունդերու ոտնատրոփն ուժգին՝

Կը դողացընէ հիմունքն իսկ դաշտին.

Հազար հարուածներ կը ծեծեն կոծեն,

Կը սարսին տարբերը մահի բոցէն.

Ո՛վ դուք սերունդ, — և այլն:

Օ՛ն կանգնեցէք, ո՛վ Հայ քաջեր, հրոսակ խուժանն ընկճելու.

Տարած էք դուք բիւր յաղթութիւն. ժամ է նոր փառք երգելու.

Դէպ ի պատերաճմ, ձեր զէնքերն առէք.

Հարիւր հազարներ փախչին ահաբեկ.

Երկսայրի սուրով կարշնեղ աղեղով՝

Սասանները սե՛ քարդել անխրոով.

Ո՛վ դուք սերունդ, — և այլն:

Ա՛լ մի՛ լաք, մի՛. որբեր՝ այրիք, ա՛լ կը բաւէ, սթափեցէ՛ք՝

Դուք որ հայրեր, հարսեր, եղբայր, քինախընդիր կը հեծէք.

Մենք ահա կ'երթանք հայ վրէժն առնելու.

Հըծծիւնն անուշակ՝ սիրելիներու.

Չայնէն երկընքի ու սաստէն երկլիս՝

Է՛յ վատ թըշնամի յաւէրժ պիտ' կորչիս.

Ո՛վ դուք սերունդ, — և այլն:

ԹՈՂ հեռանան՝ դիւցազնազարմ մեր հայրերու սուրբ հողէն,

Ծեպ չըջանան դիւապաշտներն ու կրօնքն Հայոց տարփողեն.

Մեր դաշտերն անգամ պիտ' մերժեն զիրենք.

Մեր վրկաններուն յարգանք նւրիբենք.

Խօլ չաստուածներէն ուժ կար խընդրելով՝

Լեղապատառ խոյս տան խոռ և խրոով.

Ո՛վ դուք սերունդ, — և այլն:

ՀԱ՛Պ օ՛ն քաջեր, պատերազմի. խրախոյսի փողն ա՛լ հընչեց.

Մեր եռագոյն զրօշակը պերճ առնենք թըռչինք երկնաբերձ.

Հազար փառապանծ յաղթանակն Հայի՝

Գեղանի զըխով կանգուն կը նայի.

Վեհ Այրարատի ծիրանին ծածան

Պիտի նըշմարենք զրօշակ Հայութեան.

Ո՛վ դուք սերունդ, վեհ հայրերու,
 Ճեպենք մեր վրէժը քաւելու,
 Մէն Հայ զէնքի՛ թող փութայ,
 Թող Հայ շիրիմն իսկ թընդայ.
 Յաղթանակի՛ սուրանք յառաջ,
 Յաղթանակի՛ ո՛վ Հայեր քաջ.

Երթանք յառաջ՝
 Վէս՝ քաջալանջ,
 Դիմենք յառաջ,
 Վազենք յառաջ՝
 Դէպ յաղթանակ :

Հ. ԳՐԾ. ԱՅՏԵՆԵՍ

Յ Ե Տ Ի Ն Ե Մ Ե Մ Ո Ւ Ն Ե Ջ Վ Է

Յանդըգնեցա՛ր, խեղճ հոգի, ժրպտիլ գարնան ու կեանքին,
 Եւ աստղերուն՝ որ զըւարթ գիշերուան մէջ կը ծագին.
 Յանդըգնեցար երազել ու մատներուդ տակ նիհար
 Դողացնել բերկրանքի քաղցրիկ քընար մ'ոսկելաւ:
 Բայց ի՞նչ եղաւ, ո՞ր աստղին մնաց ճանանչը սիրուն
 Անուշարոյր ու մեղրիկ քաժակին մէջ վարդերուն,
 Ո՛ր համրոյրին ջերմութիւնը սիրավառ՝ օրօրեց
 Ո՛վ բանաստեղծ վըշտահար, հոգիդ անշուք, այլ և մեծ...
 Որ փունջերէն մընացին թարմ ծաղիկներ լուսաւէտ.
 Մըտերմութիւնը մեռաւ արիւնալից վրէժիդ հետ.
 Ան կեղծաւոր ժրպիտն էր բարեկամի դէմքերուն...
 Բարեկամներ ալ գացին, աշնան տերեւը, շատ հեռուն...
 Հովը տարեր է զանոնք, չոր ծաղիկներ ամէնքն ալ.
 Եւ դուն իջար գերեզման մը քրքրուած, ով Անցեալ...
 Հովը տարեր է զանոնք, խեղճ ըստուերներ մեռելի...
 Լոյսը տակաւ դողգոջուն և տըխրագին կը մարի...

Ո՛ր փընտրեմք քեզ, ո՛վ Յոյս, չըքնաղ ծաղիկ մահաբոյր,
 Մը Լ'ըկընքի կապոյտէն ոսկեծղի, լուսաթոյր
 Քու տերևներդ օծուն՝ երևեցար աչքերուս,
 Երա՞զ մ'էիր, խեղճ պատրանք, մեռելական վերջալոյս...
 Ով երկնային խընդութիւն, (բանդագուշանք՝ վըշտահար
 Ու մահամերձ դեռատի բանաստեղծին սիրավառ),
 Ով երկնային խընդութիւն, վերջին անգամ սա կոտորած
 Լեցո՛ւր բաժակը սըրտիս Տես, կը մեռնիմ պըսակուած
 Ճառագայթովն աստղերուն ու վարդերովը գարնան...
 Լուսածաղիկ երազներ, ձեր տեսիլները կորան.
 Ըստուեր էիք, ես գիտեմ, երթա՛ք բարով, իմ հոգին